# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 236-Ա «16» հունվարի 2026 թ.

ԱԼՄԱՍՏ ԷԴԻՍՈՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ Հ.197 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 130-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի հ.Ն/77279-25 ծանուցումը, ինչպես նաև Ալմաստ Ավետիսյանի հետ 2021 թվականի հունվարի 21-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-ին կետի «ա» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-ին կետը՝

1. Ալմաստ Էդիսոնի Ավետիսյանին՝ 2026 թվականի հունվարի 22-ից ազատել «Երևանի հ.197 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2021 թվականի հունվարի 21-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի հ.197 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Սվետլանա Նահատակյանին:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**